

Զ Մ Ե Ռ Ն

Սմեն եղանակ ունի իր առանձին զուար-
ճութիւնները և յատուկ գեղեցկութիւննե-
րը, ուստի և ձմեռն որչափ ալ տխրատեսիլ
և մաղձայոյց երևայ և զուրկ 'ի զարդուց,
սակայն ունի և սա իր զարդերը, վիպու-
թիւնը գերիմաստ ու անխմանալի խորհըր-
գոց Աստուծոյ։

Աիթէ գեղեցիկ և սրտաՀաճոյ երևոյթ
չէ՞ տեսնալ զարշալոյսն փայլել ձիւնատա-
րած դաշտաց վրայ. Թանձրախիտ մէգն՝ որ
մինչ քօղանման սփռեալ էր երկրիս վրայ,
և լա՛ւա կը փարատի անակընկալ կերպով,
միւրկանալով աչաց աւարկայից պատ-
կերը։ Սպիտակաթոյր սառուցից նուրբ
պատմութեան մը ծածկած է ծառոց դազա-
թուները. բլուրք և հովիտք գունագեղեալ
են 'ի ցոյացմանէ ճառագայթից արեգա-
կան, որուն բարեբաղիս ազդեցութիւնէն ա-
րարածք կը կանգնին 'ի նոր կենդանու-
թիւն։ Որչափ տրտմարար և մեռելատիպ
կը թուէր բնութիւնն 'ի բացակայութեան
արեւու, այնչափ կը կենդանանայ և կը
զուարթանայ յերևել անդ լուսաշաւիղ ար-
քային՝ սփռելով զմահկանացուս։

Վննած ենք արդեօք մտադիր աչօք ան-
գամ մի ձեան կազմութիւնը. անդարդար-
ձութիւն բրած ենք այն հրաշալիաց վրայ՝
որ կը բովանդակէ այդ մարմնոյն մէկ հա-
տիկն։ Զարմանանք անոր կանոնաւորու-
թեան ու բարեձեւութեան վրայ, և այն աւ-
համար հատիկներուն՝ որ յուշիկ յուշիկ ան-
կանելով՝ կը պատեն գերկիր իբրև վերար-
կուաւ, և զմթնոլորտ պայծառ սպիտակու-
թեամբ։ Ի՛նչ աւելի գեղեցիկ տեսարան
կրնայ երևակայել մարդ քան զայն զոր կը
ներկայացնեն հեռաւոր լեռներն, բլուրք
և անտառք, զգեստաւորեալք շլացուցիչ
սպիտակութեամբ։ Դիտենք անտառաց ու-
տերն որ կը թեքին ճնշելք սպիտակ վրա-
նին տակ՝ որով ծածկեալ են. ամենայն ինչ
մեծածաւալ անտառի երևոյթ ունի, ու-
րոյ վերայ սփռեալ է միաձև ընդարձակ
սպիտակափայլ քօղ մը, որոյ շին կարող
նմանել ճարտարապոյնք յարուստտից։

Արդ ի՛նչ ըսելու է անոնց որ անտար-
բերեալ են այս տեսարանին առջև, և չեն
զգար այդ ախորժն ուսկէց չէ ուզեր զըր-
կել վիրինք բնութեան Արարչին նոյն իսկ
այս ցրտասարսուռ եղանակին մէջ. և ա-
սով ալ չչառացած՝ կը գանգատին բնու-
թեան օրինաց գէ՛մ։ Եթէ ձմեռնային եղա-
նակին երևոյթն չի զարթուցաներ քաղցը

ղգայում՝ մը ոյգպիսեաց սրտին մէջ, կըր-
նայ վախցուիլ որ նոյն իսկ ամենայն գե-
ղեցկութիւնք զարնան անոնց համար ան-
տարբեր բան մ'ըլլան։

Զմեռուան օրերը բնութեան հանգստեան
օրերն են։ Նախընթաց ամսոց մէջ ամե-
նայն փոյթ տարած է լրտմն տալու. կամաց
ու մտաց Արարչին, վաստակելով 'ի չա՛հ և
յօգուտ արարածոց։ Զիարդ ծաղկազարդ
փայլեցաւ 'ի զարնան, որքան առատու-
թեամբ պտղոց պերճացաւ յամառան, մե-
զի ընծայելու զանոք յաշնան։ Բոլոր ա-
միսք, կամ լաւ ևս ըսենք, բոլոր աւուրք՝
տարուան, ունին բնութեան ծոցէն ընդու-
նելու ընծոյ մը։ Կայ՝ վայրկեան՝ յորում
սփոփած չըլլայ մեր տեսանելիքը, զուար-
թացուցած մեր հոտոտելիքը, պարարած
մեր քիմքը, երբեմն նաև բոլոր զգայարան-
քը միանգամայն հոգալով։ Ընտանեաց խը-
նամածու մօր պէս զբաղեալ է զարնան
սկիզբէն մինչև աշնան վերջը՝ հոգալու մեր
պէտքերը, հանգիստը ու կենաց քաղցրու-
թիւնը. զգեստն, կերակուրն, զօսանքն,
ամենքն ալ իր մայրենի ծոցէն կը ծնանին։
Մեզի համար բողբոջն մարգագետնոյն
խտած, մեզի համար ծառերը սաղարթա-
գեղ զարդարեց, անուշահոտ և անուշա-
համ պտուղներով ու ծաղիկներով. մեզի
համար ծածկեց զարտաբայս արմտեօք.
մեզի համար ծնաւ զօրթի, իր քաղցրահամ
պտուղը և զօրացուցիչ հոյզը. մեզի համար
վերջապէս զարդարեց վախճանի բիրաւոր
գեղեցկութեամբք։ Իսկ հիմա յոգնեալ և
տաժանեալ յետ այնքան անընդհատ աշ-
խատութեանց, կը հանգչի նա. և իր հա-
գիստն ուրիշ վախճան չունի, բայց առ 'ի
ստանալ նոր զօրութիւն, նորանորհարեօք
պսակելու զախարհ։ Սակայն նոյն իսկ
այդ հանգիստն զոր կը վայելէ բնութիւնն
'ի ձմեռան, ծածուկ դործունէութիւն մ'է.
վասն զի 'ի լուութեան անդ կը պատրաստէ
նոր արարչութիւն։ Սինմանայի կերպով
կը կատարէ այն կարեւոր գործերը, որոց
զօրութեամբ երկիրն որ անապատ ու ան-
պտուղ է պո՛ւմ, պիտի զարդարուի միւսան-
գամ յետ մէկ քանի ամսոց նորանոր զար-
դերով։

Ուրեմն ամեն եղանակ ունի իր օգուտն
և միթիթարութիւնքը. և այս սպացոյց մ'է
Աստուծոյ բարեխնամ տեսչութեանը։

